Այս է հանգիստ Խոնդքեկուն, դուստր Ախիճանին, կողակից Կոստանդէլին և Տէր Վելիճանին. յիշեցէք ի Քրիստոս յԱստուծոյ. թվին :ՋԿԱ: (1512):

*Հրատ. Բարխուդարեանց, 67։*

## 68. ՀԱԴՐՈՒԹ ԳՅՈՒՂ

*680.* ***ԳՅՈՒՂԱՄԻՋԻ*** *մեծ եկեղեցու ներսում, որմնամույթի վրա. 1 տող.*

ԹՌՃԲ

ԹՎԻՆ :ՌՃԲ: (1653):

Ծանոթ. *Բարխուդարյանցն ունի թվ ՌԾՀ: Իսկ Ջալալեանցը՝ 1702։*

*Հրատ. Բարխուդարեանց, 68։ Ջալալեանց, II, 263։*

## 69. ԹԱՂԱՍԵՌ ԳՅՈՒՂ

*Գյուղը նոր է. հինը գտնվում մոտ 5 կիլոմետր հեռու, բարձրության վրա. այստեղ ավերակների մեջ մնում է XVI—XVII դարերին վերաբերող մի կիսափուլ եկեղեցի, որը եղել է թաղածածկ. որա պատերի մեջ ագուցված կան մի քանի փոքր խաչքարեր. մկրտության ավազանի մոտ եղածների վրա կա երկու արձանագրություն։*

*681.* ԽԱՉՍ ՀՌՈՒՄԻՆ

Խ աչ Ս
Հ Ռ ՈՒ Մ
ԻՆ

*682.* ԽԱՉՍ ՂԱՍՈՒՄԻՆ

Խ աչՍ
Ղ ա ս ու
մին

*683.* ***ԳՅՈՒՂԱՏԵՂՈՒՑ*** *ներքև, գետակի վրայի կամուրջի հյուսիսային ոտքի արևելյան երեսին, երկու քարերի վրա. 7 տող.*

ՅԻՇ+ԱՏԱԿԷԳՄ
ՄՈՒՃՍՅԱՊՈՆ
ԵԿԱՆԻՌԴՊԱՂՏ
ԱՍՐԻՆԿՈՂԱԳՑՓԷՐՈՆ
ԹՎԻՆ ՌՄԺԲ ՈՒՆ

ՄԻ ԲԵՐԱՆ
ԱԾ ՈՂՈՐՄ

ՅԻՇԱՏԱԿ Է ԳԱ|ՄՈՒՃՍ ՅԱՊՈՆ| ԵԿԱՆԻ ՈՐԴԻ ՊԱՂՏ|ԱՍԱՐԻՆ ԿՈՂԱԳԻՑ ՓԷՐՈԻՆ| ԹՎԻՆ :ՌՄԺԲ: ՈՒՆ (1763): |ՄԻ ԲԱՐԱՆ ԱԾ. ՈՂՈՐՄԻ ԱՍԷՔ:

Ծանոթ. *ՅԱՊՈՆ վերծանությունը կասկածելի է, թերևս պարոն։*

## 70. ԿԱՐՉԱԲԱՋԱՐ

*Այս գյուղը գտնվում է Հադրութից դեպի Ֆիզուլի քաղաքը տանող ճանապարհի վրա՝ Ադրբեջանի սահմանի մեջ։*

*Գյուղամիջում, այժմ էլ գործող հին ճանապարհի եզրին, գրեթե ամբողջական վիճա-*

*կամ կանգնած է մի հին կարավանատուն։ Ուղղանկյուն շրջապարսպից մի ծևավոր դարբաս է բացվում դեպի փոքր բակը, որի չորս պատերի տակ շինված են հյուրասենյակներ և ախոռներ. վերջիններս երկարավուն պատերի տակ են։ Դարբասի երկու կողմերում հյուրասենյակներ են՝ իրար մեջ և բակից բացվող մուտքերով։ Հանդիպակաց պատի տակ երեք կամարներով ա բացվածքով սրահ է, որի միջից դռներ են բացվում դեպի կողքերի և ետևի հյուրասենյակները։*

*Ամբողջ կարավանատունը արտաքուստ անտաշ քարերով է շինված, իսկ հյուրասենյակները և մանավանդ սրահը՝ սրբատաշ քարով։ Սրահի կամարները պայտաձև են և կառուցված հայ ճարտարապետության միջնադարյան լավագույն ոճով։ Այդ սրահի կենտրոնական կամարի սյան վրա խազգրով և անվարժ ձեռքով գրված է հետևյալ հիշատակագրությունը։*

***684.***

ԵՍՋԼԻ ՎԱՐԴՍ ԵԿԻ<br>Թ-ՃԼՌ ԵՍԿԱ Ն

ԵՍ ՋԼ,Ի ՎԱՐԴՍ ԵԿԻ Թ(Վ,ԻՆ) :ՌՃԼ,: (1681)...

Ծանոթ. *Շարունակությունը այլ մարդու է և չի ավարտված։*